Կարոյին եւ նրա ընկերներին, եւ աւելի բացատրում էի Սօնայի ինձ հաղորդած գաղտնիքների ճշտութիւնը: Բայց ինչ որ նոր եւ հետաքրքրական էր քեռի Պետրոսի խօսքերի մէջ, դա վերաբերում էր ծերունի որսորդի երիտասարդական կեանքին, եւ նրա աղմկալի անցեալին:

Քեռի Պետրոսն ասում էր, թէ ծերունի որսորդը մի ծպտեալ անձնաւորութիւն է, որ ծածկուած է հասարակ որսորդի կերպարանքում. թէ նա Մոգաց եւ Սասնոյ երկրից փախստական անցել էր Պարսկաստան, այնտեղ առժամանակ իրան թաքցնելու համար: Թէ նրա անունը առաջուց Աւօ չէ եղել, այլ նա կոչւում էր իր երկրում Մելիք-Միսաք, եւ ամբողջ Սասունի եւ Մոգաց երկրի իշխանն է եղել: Նա ունէր այնտեղ իր սեփական ամրոցը, հարուստ կալուածներ եւ իր ձեռքի տակ բազմաթիւ քաջ պատերազմողներ: Ամբողջ Սասունը եւ Մոգաց երկրի կիսավայրենի ժողովուրդը դողում էին նրա զօրութիւնից: Նա իր իշխանութեան ներքոյ զսպել էր ոչ միայն տեղացի հայերին, այլ բոլոր նոյն երկրում բնակողդ քուրդ եւ օտարազգի ցեղերին:

Մելիք-միսաքը իր կառավարութեան մէջ նոյնն էր, ինչ որ է մի երեւելի քուրդ իշխան իր բոլոր միապետական զարհուրանքով: Նա նոյնպէս արշաւանքներ էր գործում հակառակ ցեղերի վրայ, կոտորում էր, յափշտակում էր, աւարներ եւ գերիներ էր բերում: Այսպիսով նա իր իշխանութեան ներքոյ խոնարհեցրել էր բացի հայերից եւ մի քանի քրդերի ցեղեր: Վերջիններն այնպէս սերտ կապած էին իրանց հայ Մելիքի հետ, որ առանց խտրութիւն դնելու, մասնակցում էին եւ այն արշաւանքների մէջ, որոնք տարածւում էին հակառակ կողմի քրդերի վրայ:

Այստեղ ես կտրեցի քեռի Պետրոսի խօսքը, հարցնելով.

— Քրդերը նոյնը չէի՞ն անում հայերի վերաբերութեամբ:

— Անում էին, — պատասխանեց նա: — Բայց հային ի՞նչ կվայելէ աւազակ քրդից օրինակ առնել:

Ես մտաբերեցի այն խրատը, որ լսել էի ծերունի որսորդից, եւ պատասխանեցի նոյն ոճով.

— Աւազակի հետ պէտք է աւազակ լինել. աւազակի հետ չէ կարելի ճգնաւորի պէս վարուել: Երբ որ քուրդն իր սրով եւ նիզակով դիմում է մեզ վրայ, երբ որ նա գալիս է մեր տունը քանդելու, մեր կայքը յափշտակելու, մեր ընտանիքն անպատուելու, մեզ պէտք չէ խաչով եւ աւետարանով դուրս գալ նրա առաջը, այլ մեզ պէտք է նոյնպէս սրով պաշտպանել մեր պատիւը: